Արշակ Չոպանյան

Անձայն և աղվոր գերդ աստղ ու ծաղիկ

Անձայն և աղվոր գերդ աստղ ու ծաղիկ,
Բոլոր հրապույներդ կերգեն լռելյայն:
Հոգիս կունկնդրե անոնց նվագը լայն,
Մերթ բուռն ու տենդոտ, մերթ ջինջ, խաղաղիկ:

Բուրումներու նուրբ երգը թափանցիկ
Կդայլայլեն ճոխ մազերդ դեղձան.
Ճակատդ երազուն՝ քնքուշ գթության
Կ'երգե տաղն աղու և մելամաղձիկ:

Երկնաշող աչքերդ հուշիկ կիծծեն
Քաղցր անուրջներուն գեղոնն հրեղեն.
Ծոծրակդ շուշան՝ ծարավն հեշտանքին.

Շրթունքդ՝ համբույրին տենչը վարդագույն.
Ու լանջքդ՝ թաքուն՝ կմնչե լռին,
Կարոտն անվախճան փայփայանքներուն: